8. Ուսումն պարտ է շարունակել առաւաւոտ 8 ժամէ մինչեւ 12 ժամն, բայց մի առանց ներկայութեան Վերատեսչութեան կամ՝ միայն ի վերագիտաց քահանայից։

9. Ցանկացողք տալ զգաստութիւնց յուսումնարանն պէտք պարտին գրաւոր դիմել ի Հոգաբարձութիւնն նորին։

10. Ցառաջին ամի բացման ուսումնարանիս՝ աշակերտաց հիրն սահման ձրիաբար յուսումնարանէն զբոլոր կարեւոր գրեանս և զգրատախտակս մուծանելով զայն ամենայն ի թիւս պրոց ծախուց ուսումնարանի ի ժամանակաւոր մնաւանի՝ զոր ունի տալ նմին յիւրաքանչիւրումն ամի վճարելոյն Կանոնադրիչն Հայոց Վարժարանի և Խմբագրի։

11. Ցանկացողք թէ պէտ և թէ կին սաժանգակ լինիլ ուսումնարանին գրամնական կամ՝ նիւթական ընծայարերութեամբ՝ կարեն կոչել բարերար նորին։ յորոց իւրաքանչիւրն ունի զկիրառուն զարգիւնաւորութենէ և զյաւաջընթացութենէ ուսումնարանին գրաւոր կամ՝ բանաւոր յայտնել զիւր կարծիս Հոգաբարձութեան։

12. Իւրաքանչիւր բարերարն պարտ է վճարել յոգուտ ուսումնարանի ի տարին մի պակաս քան զչորս ռուբլիս արծաթոյ, զատացմանէ պրոց սահնայ ի Հոգաբարձութենէն զապագրեալ միամնաց գիր։

13. Ընդունելութիւն բարերարաց, բնաւութիւն և արձակումն վարժապետաց և նշանակումն ուսանողաց նոցա՝ կախեալ գիրառանց և զանորէնութեանց միայնոյ քահանայից և հոգաբարձուաց։

14. Զատարեկան արդեանց և ծախուց ուսումն նարանին և զանուանց բարերարաց նորին պարտ է յայտնել ի ժողովի Հայ հասարակութեան Պօլսոյ ի տարին միանգամ՝ և հրատարակել ի մեռն Հայ լրագրոց տարւոյ զայնմանէ զհաշիւ և թէմական Առաջնորդին Վարչաւանի։

15. Հոգաբարձուք և գործակից Քահանայք պարտաւոր են յամենայն երկուշաբթի առաւաւոտ ժողովել յուսումնարանի՝ և խորհել զբարութենէ և զյաւաջընթացութենէ ուսումնարանին ըստ ամենայն մնաւանց։

ՀԱՅ ԵՒ ՀԱՒԱՆ ԴՈՒՌ ԸՆԴ ԱՍՍ։

(Փոստագրոյ-Ընկեր։)

ԳՐԱԲԱՐ ԼԵԶՈՒ

Խմբագրոյ-Ընկեր Ազգայոյ ամսագրոյ։

Հայկական աշխարհ պատուական ամսագրոյս ներկայ տարւոյս Յուլիս և Օգոստոս թուերու միջոցաւ հրատարակուած Գրիգոր Արծրունի պատուարժան ազգային խնամակալից յոգուածոյ Հայկաբան և Ազգասէր ընթերցողներէն շատերն անտարակոյս պիտի ցաւին՝ լսելով նոցա մէջ մեր գրաբար լեզուի ծանր անուանակոչութիւնը։ Բայց այս ծանր և մահացու անունն նոր չէ, այլ քանի տարիէ ի վեր է, որ Պուսիոյ և Յաճկաստանի մեր բարձրեալ մէկ քանի բանասէրներէ հնարուելով, ամբաւ խոսակցութեանց և խորհրդածութեանց առարկայ, ընդդիմամարտ գրուածոց և քննադատութեանց նիւթ հանդիսացաւ։ Հուսկ ուրեմն թէպէտ և այս լեզուն իւր արժանաւոր յարգանաց և կարեւորութեան յաղթանակը ստացաւ իրրև հիմնաւոր և արմատական լեզու, մեր ազգային գրականութեան յառաջագէմ զարգացման պիտաւոր աղբիւր, շքեղ կատարելագործեալ և կիրառական բարբառ, սակայն կգտնուին տակաւին մեկ քանիներ, որոնք այս անհերքելի ճշմարտութեան ընդդէմ են, ընդ որս և Պ. Գրիգոր Արծրունին, ուստի զարմանք չէ որ, մերթ ընդ մերթ թէ իրենց խոսակցութեան և թէ գրուածոց մէջ այս քանի յարգար անունը կ'կրկնեն։

Այս պատճառներէն մեկն ըստ իմ՝ կարծեաց այն է որ, կատարկեն թէ՝ "Գրաբառ լեզուն հասարակութեան խնամալի չէ, վասնզի մեռեալ է"։ Որքան զարտուղի դատողութիւն և որչափ վերացական և վերիպակ հպեցուած։ Որ և իցէ լեզուի գերատար ընդունելի և հասկացողութիւնն կարուն նայն լեզուի յատակխոս պարզութեան և կանոնաւորութեան մէջ։ Իսկ արդ մի կարող է ուրանալ, որ այս երկու անհրաժեշտ հանգամանքները լեզուի իւր մէջ կրովանդակէ այս հրաշալուն լեզուն, և այս նոցա յայտնի է, որոնք այս լեզուի ճաշակը տիրապէս առած են, կամ՝ լաւ ևս ասել՝ կատարեալ հմուտ են, և ոչ թէ նոցա, որ մուրացածոյ կերպով և պաղնդպոյզ գիտողութեամբ միայն այս բազմահարուստ սեղանոյ մնուէն անցած, սորա քաղցրութեան, ճոխութեան և հաստատուն պարագայից անհաղորդ մնացած են։

Բայց գրաբառ լեզու ասելով թէպէտ չհասկացուի Զորրորդ դարու մեր մեկ քանի մատենագրաց իբրեւ Հեկլենաբանութիւնն՝ և երկաթի դարու Ագարական բառաղարդ ճոխութիւնն և բանաբարեալ զարդուց կուտակութիւնն, այլ մեր դպրութեան

ասկեղէն և արծաթի զարուց բազդաբախս հմուտ Հայկազան մասնաւորաց ընտիր լեզուն, որոց մէջ բազդը ներգաշնակութեան, խնամոյ առատութեան, նոցա բազդաւորս արտացոլութեան և ազնիւ փոխկշռութեան հետ կ'փոխի նաև վասն՝ պարզութիւն և շքեղաշէն կանանաւորութիւն, որ յեռին ուսմանի հասկանալի կարող է լինել թոզ թէ ուսումնասիրողաց։

Իսկ եթէ այս լեզուն իւր պանչկի պարզութեան հանգերձ անիմաստի կ'թուի հասարակութեան, ապա ոչն է հասկանալի։ ի հարկէ գիտեմ՝, մեր արդի աշխարհաբարն պիտի ցոյց տան այդ բան, անոնք՝ ոչխարդար, թեքաճասար և անկանան լեզուն, որ իւր գաւառական հազարաւոր ձիւղերով, նրն իսկ Հայոցիսաց անիմանալի բարբառներով, իւր պղտնգակ նորաձեւութիւններով, տարտակի էլեէրներով և օտարոտի և պղտանէի հնչմունքներով կ'ներկայանայ մեզ։ ոչ թէ իրրև լեզու, այլ մի բարեկամ՝ մարմնոյ բազբաեալ և իրարմէ տարարաժան մասունք կամ՝ կնճիր։ և կամ՝ թէ բազմասաստ ծառի մը բունէն կորած՝ արեգական և գրոց պսիկրն գանազան յեղափոխութեանց ենթակայ եղած ճիւղեր, ոգեաց և կենդանութեան արժանի։ Ասան զի կ'տեսնես որ ոչ թէ գրարան ոչ իւր սահմանաւոր կանոններով բնիգնաւորն հասկանալի, այլ մեկ գաւառի բարբառն միւսին անիմանալի, պնդես որ մի Հայ կ'սոփորի շատ անգամ՝ նրն իսկ իւր արենակցի հետ հասկանալի լեզուի համար թարգմանչով խօսիլ։ ինչպէս որ սորա փորձը ամէն ժամանակ կ'տանուն՝ տարաբաղդ կարաս չ'է։ Բայց ի՞նչ կորսնեմ՝ գաւառական բանաւոր բարբառներու մէջ։ սիրելի՛ ընթերցող։ սա ձեռքդ մեր ազգային լրագրաց մեկ քանի թերթերը՝ և կամ՝ թէ պարտեան մասնաւորաց մեկ քանի աշխարհաբար գրուածները։ նրնժամանդն կրացուի առաջ ա՛հ՝ ակի ուրաւական՝ մի սանգարամեան կանանեաս նոցա մէջ՝ թէ՝ ոչչափ լեզուի ազատութիւն Հայկազան ոճերու արչափ պղտանգակութիւն։ նոցա մէջ պարտանակուած գիտելիքի իմաստից արչափ տարաբարթ բաշխարութիւն։ բաւական վերբաւորութեանց ոչրան սանանոնի գործածուածներ։ այն աշխարհաբարի մէջ։ որ կ'գրուի ժողովրդական յառաջադիմութեան միջոց լինել։ Կասարատիս վասն զի նրն իսկ Հայերէն գրուածքը թէև բանիս էլ ընթերցումն կրնանա, միայն սառերը Հայերէն գանելով։ ի վերջը Զինական կամ՝ Հունական լեզու կարդալով։ կ'ծպանս մեկ կոչմն կը գնաս։ ինչպէս՝ վասն զի անպարզկի ճշմարտութիւն է։ ինչպէս որ ծառատունկ մի սանդ հասատաղիմն արմատաց չի կարող ածիլ։ ուսանանալ։ սահր արձակիլ և բազդաբեամ՝ պառաւելով բեռնաւորիլ։ սրնպէս և սանդ գրարան լեզուի հմտութեան որ և իցէ մերազնեղ բանասէր մի կանոնաւոր աշխարհաբարս լեզուով իւր միաբը հասարակութեան արտաբարակ անկարող է։

Ա՛յս պարագս։ յարգոյ ընթերցող։ պարտ՝ ձեռքդ սա մեր գրարան մասնաւորութիւններէն մի պարզ շարադրութիւն։ կամ՝ նրն ինքն Ա՛ստուածաշունչ սահեղենիկ թարգմանութիւնը։ սորա լեզուի մաքրութիւնը։ գեղեցիկ բնական պարզութիւնը և յատակախօս փոխկշռութիւնը հասանելիքը։ յիշեալ գրքուանոց հետ։ պն ժամանակ պարզապէս կ'իմանաս։ թէ ոչն է իմանալի ժողովրդական՝ և ոչն անհասկանալի։ ոչն կենդանութեան և կիրառութեան արժանի։ և ոչն մեռելութեան և թաղման։ և պն ժամանակ կ'զգաս։ թէ՝ ոչչափ ցաւոց և կարեկցութեան են արժանի յիշեալ պառաւարժան վասնակաւոր հեղինակներն։ որ իրենց պառաւական երկասիրութիւններովը և ազնակար նիւթոց թարգմանութիւններովը անհիթեթ սանով։ անգէպ բառերու բնարութեան։ սառարարքի բարդութեան և անկանան բաշտարարութեան։ հետանալով գրոց բարդաց գրարիչ և պրատարարչ պարզութիւնէն։ իսպառ անիմանալի և անմատչելի կ'գործեն։ Ազգս բիւրաւոր գժուարիմաց և անհարազատ ոճերէն ապարէն կ'ցանկանի մեկ քանիսը։ յառաջ բերիլ և ցոյց տալ իսարիս ապարարարութեան հանար։ սակայն յոգուածիս անձկութիւնն չենթարկու հանար։ ուրիշ պառէզ ժամանակի կ'թողուի։ միայն պարտի կ'ասեմ՝ որ։ զգայ գործարարս աշխարհաբար լեզուն՝ բան նոցա կարենայ՝ ոչ թէ նոր գրականութեան հիմն։ այլ խանգարումն և խարարարարութեան հեղեղումն մի է։ մեր հասարակութիւնն պարզ գրարան լեզուն ասելի հեշտաւոր կարող է հասկանալ քան թէ պարզիսի ոճոճ և ոճոճաւոր

աշխարհաբար։ Իսկ եթէ այս պատուէրներն թող տային իրենց նարամուտ մեռց պաշտպանելը, այս գեղեցիկ լեզուի անխարհարգ արհամարհութիւնը, սարա ճաշակ բան օրինի առնելու փութալին, իրենց գրաւածներին տաղանդի և ազարդիւն չէր լինիլ։ Ահաւասիկ Արարատ ամենագրգ յոգուածներին շատերն, նրն ինքն Մոսէս Աղուանեց լեզուի և Ցաճնասասանի լրագրաց շատերու գրաւածքը իրենց՝ գրաբար լեզուի յարգելութեան և նարա ոճին մերձաւորութեան թէ ոչչափ սիրաժէտ կ'թուին, և նոցա խմբագրն ոչչափ գիրաւ խմբագի են, թող վկայեն նրն լրագրաց սանձաբանձ հպարէն ընթերցողը։

Այս հարիրա՞ սեռութիւնը բաւական համարելով նոցա՝ գրաբար լեզուի մեռեալ անաւանակոչութեան առաջին պատճառին համար, պիտի գանք երկրորդին, որ կ'տարկեն թէ՝ "Այս լեզուն անգործածական է, ուրեմն մեռեալ է"։ Այս լեզուն՝ ոչ պակաս կ'կարեն իսպառ անգործածական է հասարակութեան մէջ։ Փոսն զի եկեղեցական սաղմից գրութեանց մէջ։ Թէև անհարազատ ոճով, հայագէտ ուսումնականաց, եկեղեցականաց և շատ անգամ՝ լրագրաց մէջ սովորաբար կիրառութեան մէջ է։ Բայց թէ հասարակութեան մեծ մասն սարա գործածութեան անտեղեակ է, նարանով յաւանհատնի է, կենդանուցն թաղեալ է այս նախնեաց պատուական ասունքը՝ և մեր հայրենի ժառանգութեանց շնաշխարհիկ մեռացորդը։ Աբրահամ Գ.բասանցին՝ Կեսարացին և Արբակեսացին հայերէն է՛գիտեն, մեկն Գ.բաց հրէն, միւսն Ցաճնիրէն և միւսն Արարիրէն կ'խօսին։ Մի՞թէ սարա համար հայերէն լեզուն մեռած պիտի համարուի։ Մի՞թէ նարա իրենց սասարատի բարբառը իրենց համար մեռանելու գործածական լեզու պիտի սեռեն։ Մի՞թէ նարա համար անկարելի կամ՝ սեռի պիտի համարուի իրենց մայրենի լեզուն և գրականութիւնը ազգերնիկ իրենց մէջ — ոչ բնաւ։ Այսպէս և ես մեր սահնապատութեան, եթէ չեմ՝ սիսալիլ ասելու, հայասէրութեան՝ սասարատիրութեան և շատ անգամ՝ ոգիութեան մեր լեզուն կ'արհամարհեն, և զայն անհիւթ համարելով սեռանելու անփոյթ կ'գտնուին։ Հեռաց պիտի կրկնեք ազազակեք թէ՝ "Մեռած է, ըստրաւմ՝ գործածական չէ"։ Երբ գործածելիր՝ գործածական չ'գարձաւ։ Կարելու յարմար սարսերը պատեան մէջ գրած՝ գործածելու զոյն կ'հեղգաս, բազաք կ'բառնաս թէ՝ անզէն եմ։ Ասկին մեր նախնեաց մնատենագրութեան լեռեր արկեղներու մէջ պահած, արհամարհութեան և անհոգութեան բանալիով կողպած, փոխանակ զոյն հանելու և ի գործ դնելու, կ'կրկես կ'ազազակես թէ՝ ազգաս եմ, առաւաւրի գրանդզելի չ'ունիմ։ այս ի՞նչ նարպաւոր զարմանալիք։ Երբ մոռացանք այս առաառանեան գանձարանին, գաստրկ և ձեռնունդն գարձանք։

Դիտեմ՝ մեր հանդգգպիներուն մեկ քանիս պն ճանապարհորդաց պէս, որոնք հարիւրաւոր կանանչազգեստ գաշտերը անմանչելի լեռան կ'համարին, և կամ՝ թէ նարա հետ գեղեցիկ պոզաստանները Լամբիրիթեան շուրջ կ'կարեն, գրաբար լեզուի ուսումն գժուարագրքրան համարելով կ'խուսին կը հեռանան, սարա անուն անգամ լսել չ'են ուզեր։ Բայց չէ, յոժարութիւն և մանաւոր աշխատութիւնն, ինչպէս որ ամենայն ուսանող, նրն և այս լեզուի գպեակ և սնուցիչն է։ Թող նարա չ'հրեաս կացեն մեծահատոր Ճանչնան, Արբրի, Հայր Գարրիկի և պրոց սասաւոր Գեղրականութիւնները, թող նարա աչքի առաջ չ'ունենան երկար տարիները, հոգիչ և դիւրիչ սեղանագրութիւնները սնոցան բաժանմունքներերը։ և շար և ցամաք կանոնները պէ պարմեան գիրքերով ոճը, փոխանակ անպարտաւ երկարաբանութեանց՝ գասասաւութեան ամենահեշտ և գուարճալի եղանակը, ժամանակի խնայողութիւնը, թեթև աշխատութիւնը և շատ արդիւնաւորութիւնը, որոնք այս գարաւս բացմահմուտ և մեծափաստակ բանասիրաց քանքարով հրատարակեան այս լեզուի ուսման համար։ Թող չը սարսափին, թող չ'խուսափեն այս պատուէրներ։ սարա մէջ բաց ի մանաւոր գասաւորութենէ և վերջաւորութիւններէ՝ մի մեծ գանազանութիւն չ'կ տեսնուիր սարա յարակից մերոյ աշխարհաբար լեզուին։ և կամ՝ թէ բաց ի սեպհական ոճերէ՝ նախդրաց կազմութեան, բառերու համանշանութեան՝ կարող եմ ասել որ այս լեզուն նման է Ասուրաց պրժեան կիրառական լեզուին։ ուստի այն

աշխատութեան, ջանից և յօժարակամ փութոյն, որ ի գործ կ'դրուի այս վերջնոյս հմտութեան վերայ, կէսը մեր այս լեզուին եթէ գործածուէր, անտարակոյս սորա կատարեալ վարժութիւնն կ'տարածուէր մեր մէջ։ Այս և սորա պէս անկեղակարծ հանգամանաց կարծես անծանօթ լինելով, կամ թերևս չ'գիտնալով զարնելու, իրենց անհեթեթ, ինքնահնար և վիժած լեզուի վերայ մի երևակայական ցնորքով համարումն ունենալով, դու ասա՛ յամառումն, գրաբառ լեզուն փոխանակ մեր գրականութեան տարր կոչելու, զայն նախապաշարմունք լինել պնդելով մեր պատուելիք, կ'ելլեն անգործաղրելի և հետևարար դ-ե-ա-լ կ'բարոզեն։ Այս լեզուն ո՛չ թէ միայն մեռած չէ, այլ և երեսի գծագրութիւնն անփոփոխ է, անդամներն շարժուն, զօրեղ և գործունեայ են, իւր բարեվայելուչ կայտառութիւնն, չ'քնաղագէմ գեղեցկութիւնն, քընքոյշ փափկութիւնն, իւր քաղցրալուր ձայնն, սրտաշարժ և ախորժական բարբառն անկորուստ են. միայն մենք մեր երկպառակութեամբ և անտարբերութեամբ ուսումնարաններս կրից. շահամոլութեան, փառասիրութեան և զանազան կարծեաց խաղալիկ դարձուցած, յետադիմութեամբ դէպի կորստական խորխորատ կ'դիմենք. վասն զի այնքան ի զուր ծախսեր կ'լինին, մեծագումար դրամներ կ'վատնուին, կանոնաւոր գրօղ կամ խօսող աշակերտներ շատ քիչ կ'տեսնուին. ի հարկէ լեզուն մեռած կ'համարուի։ Լեզուն իւր ազգի գոյութենէն՝ սկզբնաւորութենէն և քաղաքականութենէն՝ աճումն և բարգաւաճութիւն կ'ստանայ. եթէ ազգն չ'ասեմ մեռած, այլ մեռելատիպ քնով չ'դանդաչի, երբէք լեզուն մեռած չի՛ լինիր։

Այլ մի՛ գուցէ մեր սիրելի ընթերցողք մեր գրաբառ լեզուի անհրաժեշտ պիտանաւորութեան ջատագովութիւնը լսելով՝ զմեզ աշխարհաբառ լեզուին թշնամի և նորա կարևորութիւնը ղլացող և նորա յառաջադիմութեան արգելարիթ համարին, ո՛չ բնաւ. մեր խօսակցութեան ընթացքէն արդէն պարզապէս կ'երևի, որ մենք աշխարհաբառ լեզուն կ'պաշտպանենք և հարկաւոր կ'համարինք, բայց ո՛չ թէ նորա այժմեան չքաւոր, անհեթեթ և վայրավատին դրութեամբ, այլ կանոնաւոր սահմանափակութեամբ, այլ հասկանալի պարզութեամբ, որ կ'յաջողի միայն գրաբառ լեզուի հզօր օժանդակութեամբ. մինչև որ գրաբառի աղուական և ախորժալուր ձայնն չընտելանայ մեր մտաց և ականջին, չենք կարող ընտրութիւն անել աշխարհաբառի. առանց սորա ուսման սոսկումն և սարսափ կ'պատէ զմեզ, չենք կարող մեր սեպհականը ճանաչել և ըստ վարիր։ Ուստի այն ամենաձոխ գանձարանէն սորա յետին աղքատութիւնը լցնելու է, նորա սահմանաւոր կապակցութիւններով ժողովելու է սորա ցրուեալ պատառեալ անդամները, և կազմելու է մի նոր ամբողջ բարկայարմար մարմին. այն անմահ էակի միջնորդութեամբ փչելու է սորա մէջ շունչ կենդանութեան և պարզութեան, և գործածելու է զայն մեր ընտանեկան մտաց հաղորդութեան և այլ մասնաւոր յարաբերութեանց մէջ։ Իսկ գրաբառը, ազգութեան այս ազնիւ և կենդանի վկայականը, ո՛չ միայն իրրև հիմն և աղբիւր աշխարհաբառի ուսանելու և պահպանելու է, այլև անհրաժեշտ հարկաւոր է ազգային վեմ գրուածոց, կարգաւորեալ բանախօսութեանց, աստուածաբանական և իմաստասիրական խնդրոց բացատրութեանց, պատմաբանական յօդուածոց և ընտիր նամականեաց մէջ գործածելու, որ տակաւին դարերու կարօտ է, որ այս ծանր պաշտօնները կարողանայ կատարել մեր կակազոտ աշխարհաբառն։

Ուրեմն սիրելի համարիւն եղբարք, թողունք սառնութիւն, թողունք անհոգութիւն, թողունք օտարաց հակամիտութիւնը, ի բաց ձգենք մեր ազգային տարերաց անխորհուրդ արհամարհութիւնը՝ և ամեն վայր ի վերոյ հայեցուած և վնասակար համոզումն. իրրև անհարազատ որդի ի զուր չը վատնենք, ի զուր չ'թաղենք մեր հայրենի քրտնաջան աշխատութեամբ ժողովուած դրականական ժառանգութիւնը։ Մեր ձեռք չ'քաղենք այն հաստատուն կանոնաւոր հիմն, այս գեղեցիկ լեզուն, որոյ վերայ շինուած է մեր ազգայնութեան և ուղղափառ կրօնի սրբակառոյց և արենազանգ շինուածն։ Անխոհեմ ընտրութեամբ չ'լուծենք մեր համազգային միութեան այս ամրապինդ կապը որ մեր մատենագրութիւնը իւր յետին անկման դարուն վերականգնեց, և կրօնի հետ աջակցելով մեր ազգային գոյութիւնը պահպանեց։ Մեր ցիրու-

ցան վիճակի մէջ ոչ ուրեք կ'տեսնուին ոչ մէկ ազգային հաստատուն սովորութիւն և նախնական յատկութիւն, որոնք օտար ազդեցութեան զոհ եղած են. մնացած է միայն այս լեզուն, որն որ միայն պիտի կարողանայ մեր ազգի տարբեր սովորութիւններով, տարբեր կարծիքներով, այլատարազ էքաւոր բարբառներով ցրուեալ անդամները ժողովել, ազգասիրութեան՝ բարեպաշտութեան և սեպհական միակ յատկութեան կապով միացնել, և կազմել մի մարմին և մի հոգի յամենեսին բնակել։ Մեր ազգային նաւու այս բազմավտանգ բարոյական ալէկոծութեան միջոցին փոխանակ այս ազատարար և մատնանիշ կողմնացոյցը զգուշութեամբ պահպանելու, մեր ձեռք չ'խորտակենք, որով յետոյ նաւահանգստի անքոյթ խաղաղութենէն չ'զրկուինք։ Մեր բարեխնամ մեծավաստակ նախնիքներէն մեզ յանձնուած այս ոսկեղէն քանքարը՝ փոխանակ կարօտ Հայկազանց մէջ տառատութեամբ շահեցնելու, հեղգամիտ ծուլութեան և անգործութեան հողոյ մէջ չ'թաղուցանենք իբրև սերունդ ապաշնորհ և անպիտան։ Այս կենդանարար լեզուի անսայթաք առաջնորդութեամբ միայն պիտի կարողանանք կարդալ և հասկանալ Աստուածաշունչ սուրբ գրոց հոգեպարար ընթերցուածները, մեր նախնեաց հոգեշունչ գրուածները, սրտաշարժ ճառեր, սիրալի քարոզները, երկնահրաւէր աղօթքներ, ոսկեբար երգեր և շարականները։ Սորանով իբրև աներկեան տեսութեամբ պիտի զննենք մեր անցեալ կենաց նկարագիրը և մեր իմաստուն և սրբազան նախահարց մեր ազգի և եկեղեցւոյ համար ընտրած բարեբաւութեան ճանապարհները. անարատ մտօք զգանք. ինչ որ նոքա զգացին, քարոզե՛նք՝ ինչ որ նոքա քարոզեցին, ընթանա՛նք՝ ուր որ նոքա ընթացան, որ է միակ փրկութեան շաւիղ։

Այս է իմ համոզումն գրաբառ լեզուի անշուշտ պիտանաւորութեան մասին, թո՛ղ ուրիշներ՝ ընդ որս և Պ. Գրիգոր Արծրունին՝ այլօրինակ դատեն։ Միայն կ'խնդրեմ . . Խմբագրութենէդ Արարատայ՝ այս գրութեան տեղի շնորհել պատուական ամսագրոյդ մէջ։

Մ՝աղաւ Պլ՝ուզեան։

է 15ն Նոյեմբերի 1870 ամի
է Շուշի

(Շարունակութիւն։)

Գիտցողին ճանճու փեթակն սաղ (է, չ'գիտցողին դափ ու զուռնէն նուազ է։

Գործդ պէնդ բռնէր, վատ եկաւ թուք երեսիս։

Գործ կայ Աստուծոյ խաթրու է, գործ կայ մարդի խաթրու։

Գործն այն է՝ որ աստուած յաջողէ։

Գտաւ չ'կերաւ։

Գրուածը չի՛ ջնջվում։

Դրացին դրացուն է նայում, անձը կրակում՝ քը-ցում։

Դանակ զարնես՝ արիւն դուրս չի՛ գալ։

Դավայ՝ (ուղտ), նաղն բարձր ոտից փայտից շինած։

Դառնութիւնը դառնութիւնն կտրում՝, տաք ջուրը էլ փորացաւը։

Դէ՛ (օն) արի՛ էս մեռելը էս ջրէն հանէ։

Դժոխքիցը կրակ առնեմ՝ ոռտեղ վառեմ։

Դուն Զաքարին հաց մի՛ տանիր, թող Զաքարը քաղցածութիւնիցը մեռնի։

Դմբի դմբի գուռը բաց, քարղանը՝ ապուր երկու հաց, թէ չէ կուգամ գլխէ բաց։

Դրացու հաւը՝ դրացուն ղազ (սագ)՝ կերևի։

Դու քեզ մի՛ գովիր, թող այլքը գովեն։

Դրացուդ ղրբաթը (բամբասանք) մի՛ անել, իամ գուռն է կամ երթիքը։

Եարանը (վէրք) եարայ կբանայ։

Ես աղայ գուն աղայ (տէր, իշխան), մեր աղջն ո՞վ աղայ։

Ես իմ զուռնէն չը՛չալեմ՝ թէ քո էշը կխրտնի։

Ես անօթի չեմ մնալ. արդ քո բոյսդ ասա՛։

Եկածի շատին չե՛ն նայում։

Եկեղեցին չաւարտած՝ կոյրերը գուռը բռնեցին։

Երեսը՝ երեսիցն է ամաչում։

Երկու բերանը միացած՝ միրը ոչինչ է։

Երկչոտ մարդը աշխատանք չի անում։

Երես տուինք Աղուն՝ ապականեց խալուն (գորգ)։

Երկու ջուրը մի հացի տեղ է։

Եօթն պաճանաղ (քենայր) ճանապարհ գնալիս՝ ասել են մարդ չկայ՝ որ հետը խօսենք։

Երես տուինք, աստուռ էլ կուզես։

Զամի (արդէն) աչքս կպաղէր քեզ համար։

Զուր անէծքը տիրոջն է։

Զրկանքով հարստացողի վերջը փճութիւնն է։

Զօրը (ժժուարը) դանիցը ներս մանելիս՝ դատաստանը երթիքիցը դուրս կելլէ։

Էդ միրն է, դեռ ո՞ւր է իրը։

Էդտեղ ձեռքըմ՝։

Էն սատանաներից չի՛ որ մի խաչակնքելով հալածուի։

Էշն էլ ապրանքից ես սեպում՝։

Էշը գայլին տեսնելիս՝ իւր քեռին կարծելով՝ զըռալով դէմն է վազում՝։

Էշը եօթն տեսակ լաղ գիտէ. բայց ջրի մօտ երթալիս՝ բոլորն մոռանում։

Էս քեզ խրատ՝ որ էլ չքնես ճամբի վրէն։